

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք
Հատոր Ա
ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2016, 354 էջ

Խմբագրական խորհուրդ՝
Մհեր Նավոյան
Նիկոլայ Կոստանդյան
Աննա Արևշատյան
Տաթևիկ Շախկուլյան
Գայանե Ամիրաղյան
Սրբազրիչ՝ Նանե Միսակյան

Yearbook of Komitas Museum-Institute
Volume I
KOMITAS AND MEDIEVAL MUSIC CULTURE

Yerevan, Publication of Komitas Museum-Institute, 2017, 354 pages

Editorial board:

Mher Navoyan
Nikolay Kostandyan
Prof. Anna Arevshatyan
Tatevik Shakhkulyan
Gayane Amiraghyan
Proofreader: Nane Misakyan

Գլուխ Ա «Կոմիտասը և իր ժամանակը»

Chapter I: Komitas and His Time Period



Ռեգինա Ռանդհոֆեր (Գերմանիա), դոկտոր
Հանովերի Երաժշտության, դրամայի և հաղորդակցության
համալսարանի
Հրեական երաժշտության եվրոպական կենտրոն

Регина Рандхофер (Германия)
Европейский центр еврейской музыки
при Университете музыки, драмы и коммуникации в
Ганновере

Dr. Regina Randhofer (Germany)
European Centre for Jewish Music
Hannover University of Music, Drama and Media

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ԲԵՐԼԻՆՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտասի՝ Բեռլինյան ուսումնառության ժամանակահատվածը՝ 1896-1899 թթ., վճռական ազդեցություն ունեցավ նրա հետագա ձեռքբերումների վրա: Նա ստացավ եվրոպական երաժշտության բարձրագույն կրթություն, ինչն Էջմիածնի ճեմարանը չէր կարող առաջարկել: Հոգվածը փաստում է, որ Բեռլինն ավելի շուտ խթան հանդիսացավ՝ հայկական երաժշտությունն ազգային պահանջների տեսանկյունից կիրառելու համար: XX դարի Գերմանիայում սկիզբ առան առանցքային քննարկումներ և ռազմավարությունների մշակումներ՝ միտված մշակութային ազգի կառուցմանը, ազգային միասնության ցուցադրությանը և ինքնության հաստատմանը: Գերմանիան մատնացույց արեց Օսմանյան և Ռուսական կայսրություններում հաստատված և պետականությունից զրկված հայ համայնքների ինքնության հաստատման հսկա ներուժը «ազգային զարթոնքի» ժամանակաշրջանում:

Կոմիտասի՝ ընդհանրական ազգային շահերի և նրա ուսուցիչների մոտեցումների ընկալումը թույլ կտա լույս սփռել Բեռլինի դասախոսների ազդեցության շրջանակներից դուրս Կոմիտասի ներդրումը բնութագրող մոտեցումների և գաղափարների վրա: Իմ եզրահանգումները կապված են Կոմիտասի գործունեության որոշ աննախադեպ դիտանկյունների հետ. գործունեություն, որը հատելով ավանդական դիսցիպլինների սահմանները, արձագանք է գտել Բեռլինյան երաժշտագիտության և նոր հիմնված Միջազգային երաժշտական ընկերության շրջանակներում մինչև այն պահը, երբ Առաջին համաշխարհային պատերազմը վերջ դրեց երաժշտագիտության այս վաղ ստեղծարար ժամանակաշրջանին:

Բանալի բառեր՝ Բեռլին, վաղ երաժշտագիտություն, ժողովրդական երգ, գաղափարների պատմություն, ինքնություն, ազգի ձևավորում:

КОМИТАС И БЕРЛИНСКОЕ МУЗЫКОВЕДЕНИЕ

Берлинский период обучения Комитаса (1896-1899 гг.) сыграл решительную роль для его последующих достижений. В Берлине он получил высшее музыкальное образование, которое Эчмиадзинская семинария не могла ему предложить. Важность берлинского периода для Комитаса не ограничивается лишь приобретением художественных и академических знаний. В статье аргументируется, что Берлин скорее послужил для него толчком к использованию армянской музыки с позиции национальных требований. В XIX веке в Германии развернулись важные дискуссии и разрабатывались стратегии, направленные к созданию культурной нации, проявлению национального единства и утверждению идентификации. Германия указала армянским общинам, проживающим в

составе Русской и Турецкой имерий и лишенным государственности, на огромный потенциал утверждения национальной идентичности в период “национального расцвета”.

Выявление национальных интересов Комитаса и позиций его учителей предоставит возможность осветить идеи и позиции самого Комитаса за рамками влияния его берлинский преподавателей. Мои заключения относятся к некоторым беспрецедентным аспектам деятельности Комитаса — деятельность, которая выходя за рамки традиционных дисциплин, находила отклик в кругу берлинских музыковедов и Международного музыкального общества до того момента, когда Первая мировая война положила конец этому процветающему периоду раннего музыковедения.

Ключевые слова: Берлин, ранний период музыковедения, народная песня, история идей, идентификация, формирование нации.

KOMITAS AND BERLIN MUSICOLOGY

Komitas's period of studies in Berlin 1896–1899 is regarded as crucial for his later achievements. There he obtained the higher education in European music his seminary in Etchmiadzin could not offer. However, Berlin's significance for Komitas went far beyond mere transfer of artistic and scholarly knowledge. In my paper I argue that Berlin was rather a catalyst for Komitas to exploit Armenian music for the national cause. For in Germany, in the XIX century pivotal discourses and strategies emerged, aiming at cultural nation building, demonstration of national unity and construction of identity. Thus, Germany offered a high potential of identification to the stateless Armenian community in the Ottoman and Russian Empire at the time of “national awakening”.

Fathoming the shared national interests of Komitas and his teachers is beneficial in enlightening the approaches and insights characterizing Komitas contributions beyond the impact of his Berlin teachers. Thus, I conclude with some considerations on the unprecedented, pioneering aspects of Komitas's work which in turn, cutting across traditional disciplinary boundaries, found an echo in Berlin musicology and the newly established International Music Society, until World War I put an end to this early creative period in musicology.

Keywords: Berlin, early musicology, folk song, history of ideas, identity, nation building.



Տաթևիկ Շախկուլյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Татевик Шахкулян (Армения), кандидат искусствоведения
Музей-институт Комитаса
Институт искусств НАН РА
Ереванская государственная консерватория им. Комитаса

Tatevik Shakhkulyan (Armenia), PhD in Art
Komitas Museum Institute
Institute of Arts of NAS RA
Komitas State Conservatory in Yerevan

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածի նպատակն է՝ քննել Կոմիտասի մշակումների որոշ ստեղծագործական դրվագներ, որոնք կոմպոզիտորի ժամանակաշրջանում նորույթ էին և համաշխարհային պրոֆեսիոնալ երաժշտության մեջ դեռևս տարածում չունեին: Ակնհայտ է, որ Կոմիտասը, կրթվելով Էջմիածնում, ապա՝ Բեռլինում, ըստ դասական երաժշտության ավանդույթների ուսումնական սկզբունքների, առաջ է քաշել բազմաթիվ գաղափարներ, որոնք ավելի ուշ՝ XX դարի ընթացքում միայն պիտի դրսևորվեին կոմպոզիտորական արվեստում: Այդ գաղափարները նրա մոտ մասամբ կարող էին ձևավորվել եվրոպական առաջատար կենտրոնների (Հոմբուրգի համալսարան, Միջազգային երաժշտական ընկերություն և այլն) ներկայացուցիչների հետ շփման արդյունքում՝ ազդեցությունների անուղղակի դրսևորմամբ, սակայն փաստ է, որ գործնականորեն այդ նույն հաստատություններն այդ գաղափարներին դեռ չէին հանգել: Եթե անգամ ոչ առաջինն աշխարհում (թեև մենք հակված ենք դրան հավատալու), ապա գոնե առաջիններից մեկը Կոմիտասն առաջադրեց պոլիռիթմը, ինքնաբերական կորուստները կամ դրանց հետ որոշակի համեմատության հանգեցնող ակորդները, ֆոլկլորային գործիքների՝ օպերային նվագախմբում կիրառությունը և այլն: Հաշվի առնելով այս ամենը՝ պետք է Կոմիտասին համաշխարհային երաժշտության մասշտաբով արժևորելու խիստ բարձր չափանիշ ունենալ:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, XX դարի երաժշտություն, հարմոնիա, պոլիմետր, ֆոլկլորային երաժշտական գործիք:

КОМИТАС И ЗАПАДНАЯ МУЗЫКА XX ВЕКА

В статье обсуждаются некоторые композиционные новаторства Комитаса, которые в момент осуществления не были распространены во всемирной музыке. Одно из новаторств – полиметрия. В хоровом произведении “Тандо” (Комитас, Собр. соч., т. 4, 1976) Комитас присоединял 3/4 с 5/4 в вертикальном измерении, с целью показать идейный контраст между вековой непрерывностью церковных колоколов (3/4) и человеческими размышлениями (5/4). Произведение было написано в 1890-ых годах, а полиметрия была распространена в западной музыке только в XX веке.

Интересен факт использования армянских народных музыкальных инструментов в симфоническом оркестре, доказательство которого мы нашли в черновиках неоконченной оперы Комитаса “Ануш” (архив Комитаса, Музей литературы и искусств им. Чаренца, 489). В начале XX столетия включение фольклорных инструментов в симфоническую партитуру – идея новая.

Следующее новаторство относится гармонии. Квартовые аккорды, в составе которых обязательно присутствует уменьшенная септима, предлагается именовать Комитасовской гармонией. Кроме того, Комитасовскими гармониями являются много-ярусные терцовые аккорды –нонаккорды и ундецимаккорды, в широком расположении звуков, не имеющие классические разрешения.

Ключевые слова: Комитас, музыка XX века, гармония, полиметрия, фольклорный музыкальный инструмент.

KOMITAS AND THE XX CENTURY WESTERN MUSIC

In this article, some compositional novelties are discussed, which were realized by Komitas in his works. The phenomena are noteworthy, since at the time being displayed they were yet unknown in world music. One of the novelties is polymeter. Komitas composed his choral work “Tando” (Komitas, Works, V.4, 1976) conjoining 3/4 with 5/4 in vertical dimension, to present the contrast between permanence of church’s bells (3/4) and human deliberation (5/4). Komitas wrote this work in 1890s, meanwhile polymeter was circulated in Western music later in the XX century. The usage of Armenian folk music instruments in the symphony score is noteworthy, the evidence of which we found in the drafts of Komitas's uncompleted opera Anoush (Komitas archives, Charents Museum of Literature and Art, No. 489). In the beginning of the XX century, involving folk music instruments in symphony orchestra was not common yet.

The other novelty refers to harmony. The chords consisted of the fourths resulting in diminished sevenths, are suggested to be named as Komitas's Harmony. Besides, multi-layered chords consisted of the thirds making together ninth-chords or eleventh-chords, and being in open rather than closed arrangement, are also considered as Komitas's Harmony.

Key words: Komitas, XX century music, harmony, polymeter, folk music instrument.



Լուսինե Սահակյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Лусине Саакян (Армения)
кандидат искусствоведения, доцент
Ереванская государственная консерватория имени Комитаса

Lusine Sahakyan (Armenia)
PhD in Art, Assistant Professor
Komitas State Conservatory in Yerevan

ՀԱՄԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՊԱԿԵՏԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հոդվածը նվիրված է հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի՝ ռուսական մշակույթի հետ ունեցած առնչություններին: Ներկայացվում են հայ-ռուսական դարավոր պատմամշակութային կապերը, ռուսական երաժշտական արվեստի նշանակությունը XIX դարավերջի և XX դարասկզբի արևելահայ կոմպոզիտորների գործունեության համար: Առաջին անգամ ժամանակաշրջանի պատմաքաղաքական համատեքստում հնարավոր ամբողջությամբ քննվում են Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության՝ ռուսական մշակույթի հետ առնչվող փաստերը, նրա արվեստին տրված ռուս ականավոր երաժշտագետների մասնագիտական գնահատականներն ու կարծիքները:

Վարդապետն էջմիածնում, Անդրկովկասում և Եվրոպայում ծավալել է ստեղծագործական և երաժշտագիտական գործունեություն, որին անդրադարձել են ռուսական մշակույթի հեղինակավոր ներկայացուցիչներ Թ. Հարտմանը, Ն. Չերեպինը, Մ. Գնեսինը, Դ. Մագգիդը, Վ. Կորգանովը, Դ. Շոստակովիչը: Անդրկովկասի ռուսալեզու մամուլը բարձր է գնահատել Կոմիտասի երաժշտալուսավորական առաքելությունը, հրապարակումներին արձագանքել է պետերբուրգյան մամուլը: Վարդապետի համերգ-դասախոսությունները Թիֆլիսում, Բաքվում ընթացել են աննախադեպ հաջողություններով: Այս փաստերի համակողմանի ու նորովի դիտարկմամբ ամբողջանում է Կոմիտաս Վարդապետի կատարած գործի դերն ու նշանակությունը ազգային մշակույթի համար:

Բանալի բառեր՝ Կոմիտաս Վարդապետ, երաժշտական մշակույթ, ռուսական երաժշտություն, երաժշտագետ, կոմպոզիտոր:

КОМИТАС ВАРДАПЕТ (АРХИМАНДРИТ) И РУССКАЯ КУЛЬТУРА

Статья посвящена взаимоотношениям основоположника армянской национальной композиторской школы Комитаса с русской культурой. Прослеживаются вековые русско-армянские культурно-исторические связи, рассматриваются роль и значение русской музыкальной культуры в творческой деятельности восточно-армянских композиторов конца XIX и начала XX веков. Впервые в контексте историко-политических событий эпохи наиболее целостно изучаются факты, подтверждающие причастность творческой биографии Комитаса к русской культуре, излагаются профессиональные оценки и мнения крупнейших русских музыкантов о творчестве Комитаса.

Активная творческая и научная деятельность, которую Комитас развернул в Эчмиадзине, Закавказье и Европе, была достаточно широко освещена авторитетными деятелями русской культуры Ф. Гартманом, Н. Черепниным, М. Гнесиным, Д. Маггидом, В. Коргановым, позже и Д. Шостаковичем.

Русскоязычная пресса Закавказья высоко оценила музыкально-просветительскую миссию Комитаса, его публикации находили отклик в петербургской прессе. Лекции-концерты Комитаса в Тифлисе, Баку проходили с беспрецедентным успехом. Благодаря разностороннему изучению и новаторскому освещению этих фактов, роль Комитаса Вардапета и его значение в национальной культуре высвечивается наиболее полно и целостно.

Ключевые слова: Комитас, музыкальная культура, русская музыка, музыковед, композитор.

KOMITAS VARDAPET AND THE RUSSIAN CULTURE

This article presents the interactions of Komitas Vardapet with the Russian culture. The centuries-old Armenian-Russian historical and cultural relations are discussed in the article with a specific focus on the role Russian art music played in the creative activity of the Eastern Armenian composers of the late XIX and early XX centuries. This article seeks to inquire, within the context of the historical and political realities of the period, into the relations of Komitas's creative activity with the Russian culture, with a reference to the professional accounts and reminiscences of a number of outstanding Russian musicologists about his work.

Outstanding figures of the Russian culture, such as T. Hartmann, N. Cherepnin, M. Gnessin, D. Shostakovich, D. Maggid, V. Korganov, V. Minorski and A. Tarkovski have reflected upon Vardapet's professional activity in Etchmiatsin, the Transcaucasia region and Europe. The Russian language press of Transcaucasia highly appreciated the musicological and educational activities undertaken by Komitas. Those reflections were also covered by the printed press in St. Petersburg. Komitas's lectures accompanied by concerts organized in Tiflis (Tbilisi) and Baku had noticeable success. Comprehensive, as well as modern-day observations of these facts conclude my studies on the role Komitas Vardapet played in the formation of national cultural tradition.

Key words: Komitas Vardapet, musical art, Russian music, musicologist, composer.



Մերի Կիրակոսյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Мери Киракосян (Армения)
кандидат искусствоведения
Институт искусств НАН РА

Meri Kirakosyan (Armenia), PhD in Art
Institute of Arts of NAS RA

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ. ԿՈՄԻՏԱՍ ԵՎ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՅԱՆ

Փանոս Թերլեմեզյանը XIX-XX դարերի հայ կերպարավեստի պատմության էջերում իր ուրույն տեղն է զբաղեցնում որպես ռեալիստական գեղանկարչության անվանի նկարիչ, մշակութային-հասարակական գործիչ և հայ ազատագրական պայքարի նվիրյալ: Արվեստագետն իր ստեղծագործական արգասալից կյանքի ընթացքում կապեր է հաստատել հայ մշակույթի ականավոր գործիչներից շատերի հետ, որոնց թվում հատկապես առանձնանում է Կոմիտասի հետ նրա ջերմ մտերմությունը: Տաղանդավոր երաժշտագետին և նշանավոր նկարչին կապում էր բազմամյա ընկերությունը: Նրանք բարեկամացան և ավելի մտերմացան, երբ Թերլեմեզյանը փոխադրվեց Պոլսո Բանկալտի թաղամաս, և Կոմիտասի հետ բնակվեցին մի տան մեջ: Սույն հոդվածի համար հիմք են ծառայել նկարչի հուշերը, արխիվային, անտիպ նյութերը և ժամանակակիցների վկայությունները: Ներկայացվում է Թերլեմեզյանի վրձինն պատկանող, նկարչի ստեղծագործական վաղ շրջանին առնչվող լավագույն դիմանկարի՝ «Կոմիտաս Վարդապետի» (1913) ստեղծման պատմությունը՝ մատնանշելով ստեղծագործության անվանման հետ կապված ճշգրտումներ: Անդրադարձ է արվում Թերլեմեզյանի կոմիտասյան պատկերների թե՛ գծանկարչական և թե՛ երփնագիր գործերին: Շոշափվում են 1912-1913 թթ. Կոմիտասի և Թերլեմեզյանի մշակութային գործակցության հետ կապված տվյալները, նաև հայ գրականության մեջ առկա անդրադարձները նկարչի և երաժշտի մտերմությանը: Գիտական շրջանառության մեջ են դրվում Թերլեմեզյանի անհայտ աշխատանքներից «Կոմիտաս վարդապետը և իր դասընկեր եզդիների ցեղապետը» (1910), ինչպես նաև կորսված «Թերլեմեզյան, Կոմիտաս, Սիամանթո և Մաննիկ Պերպերյան» խմբակային էտյուդը: Արձարծվում են Կոմիտասի և Թերլեմեզյանի աշակերտուհի Արմինե Մելիքյանի դիմանկարի ստեղծման պատմությունը և վերջինիս հետագա ճակատագրին վերաբերող մեր ուսումնասիրության արդյունքները:

Բանալի բաներ՝ Փանոս Թերլեմեզյան, Կոմիտաս, ռեալիստական գեղանկարչություն, հայ գրականություն, «Արմենուհի Մելիքյանի դիմանկարը», Կոստանդնուպոլիս:

ВЫДАЮЩИЕСЯ ДЕЯТЕЛИ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ: КОМИТАС И ПАНОС ТЕРЛЕМЕЗЯН

Фанос Терлемезян занимает особое место в истории армянского изобразительного искусства XIX-XX вв. как знаменитый художник реалистической живописи, культурно-общественный деятель и участник освободительного движения. Художник в своей богатой творческой жизни дружил со многими выдающимися деятелями армянской культуры, в том числе с Комитасом. Талантливого музыковеда и известного художника связывала многолетняя дружба. Они сблизились, когда Терлемезян переселился в Константинополь и они стали проживать в одном доме с Комитасом.

Статья основана на мемуарах художника, неизданном архивном материале и свидетельствах современников. Представлена история создания лучшего портрета раннего творческого периода Терлемезяна “Комитас Вардапет” (1913). Обсуждаются графические и живописные работы Терлемезяна посвященные образу Комитаса. Рассматривается культурная деятельность Комитаса и Терлемезяна в 1912-1913 гг., представлены свидетельства дружбы художника и музыковеда, упомянутые в армянской литературе. В научный оборот введена неизвестная работа Терлемезяна “Комитас Вардапет и его друг — предводитель езидов” (1910), а также потерянный групповой этюд Терлемезян, “Комитас, Сиаманто и Маник Перперян”. Обсуждается история создания и дальнейшая судьба портрета Арменуи Меликян, которая была ученицей Терлемезяна и Комитаса.

Ключевые слова: Фанос Терлемезян, Комитас, реалистическая живопись, армянская литература, “Портрет Арменуи Меликян”, Константинополь.

THE DEVOTEES OF THE ARMENIAN CULTURE: KOMITAS AND PANOS TERLEMEZYAN

As a prominent artist of realistic painting, a cultural-public figure and a devotee of the Armenian liberation struggle, Panos Terlemezyan has a special role in the history of Armenian fine arts of the XIX-XX centuries. During his creative life the artist had active relations with many prominent figures of the Armenian culture. Among those relationships his friendship with Komitas Vardapet was especially noteworthy. The many years' friendship of the musicologist and the painter became more and more fruitful, when Terlemezyan moved to Constantinople and rented an apartment in the same building where Komitas was living. The memories of the painter, as well as many archival materials and evidences of the contemporaries served as bases for starting a discussion on the matter.

A painting by Terlemezyan - Komitas Vardapet, created during his early creative period (1913), is presented in the article, focusing on the history of its creation and clarifying details concerning the title. Other graphic and painted works of Komitas by Terlemezyan are discussed as well. Details of the cultural collaboration of Terlemezyan and Komitas during 1912-1913 are another subject discussed, considering also the references to the latter found in the Armenian literature. Not widely known works by Terlemezyan as the Komitas Vardapet and His Friend the Chief of Yezids (1910) and a lost group etude Terlemezyan, Komitas, Siamanto and Mannik Perperyan are discussed here. The history of the creation of Armenuhi Meliqyan's portrait and its destiny are presented. Armenuhi had been both Komitas's and Terlemezyan's student.

Key words: Panos Terlemezyan, Komitas, realistic painting, Armenian literature, "Portrait of Armenuhi Melikyan", Constantinople.



Նիկոլայ Կոստանդյան (Հայաստան)
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

Николай Костандян (Армения)
Музей-институт Комитаса

Nikolay Kostandyan (Armenia)
Komitas Museum-Institute

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծավալուն ու արժեքավոր է Կոմիտասի և Մարգարիտ Բաբայանի նամակագրությունը: Մ. Բաբայանին հասցեագրած իր առաջին նամակը Կոմիտասը գրել է 1905 թ. հունիսի 25- ին Էջմիածնից, իսկ վերջինը՝ 1914 թ. հունիսի 23-ին՝ Փարիզից: Ինչ վերաբերում է Մ. Բաբայանի՝ Կոմիտասին ուղղված նամակներին, ապա դրանցից պահպանվել են ընդամենը վեցը: Դրանք գրվել են 1910 թ. մայիսի 15-20 Լոնդոնից, 1911 թ. հոկտեմբերի 18-ին Փարիզից, 1912 թ. հուլիսի 21-ին Փարիզից, 1912 թ. հուլիսի 23-ին Փարիզից, 1912 թ. նոյեմբերի 3-ին Շնևից և 1913 թ. ապրիլի 10-ին Փարիզից: Մեր նպատակն է՝ տարաբնույթ բովանդակությամբ նամակների միջոցով ուրվագծել Կոմիտասի՝ արվեստագետի, մարդու և մտածողի կերպարը: Թեև Կոմիտասն իր նամակագրության մեջ զուսպ է ու ինքնամփոփ, այդուամենայնիվ՝ Մ. Բաբայանին ուղղված նամակներում դրսևորվում է նրա հետաքրքրությունների բազմակողմանիությունը, մտքի սրությունն ու անկախությունը, կենդանի ու նուրբ դիտողականությունը, շրջապատող աշխարհի հանդեպ վերին աստիճանի զգայուն վերաբերմունքը:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, Մարգարիտ Բաբայան, նամակագրություն:

ПЕРЕПИСКА КОМИТАСА И МАРГАРИТ БАБАЯН

Переписка Комитаса и Маргарит Бабаян обширна и значительна. Первое письмо, адресованное М. Бабаян, Комитас написал 25 июня 1905 г. из Эчмиадзина, последнее — 23 июня 1914 г. из Парижа. Из писем М. Бабаян, адресованных Комитасу, сохранилось лишь шесть: эти письма были отправлены с 15 по 20 мая 1910 г. из Лондона, 18 октября 1911 г. из Парижа, 21 июля 1912 г. из Парижа, 23 июля 1912 г. из Парижа, 3 ноября 1912 г. из Женевы и 10 апреля 1913 г. из Парижа. Наша цель — очертить образ Комитаса — художника, человека и мыслителя, посредством анализа его писем, которые характеризуются разноплановым содержанием. Несмотря на сдержанный и замкнутый тон высказывания Комитаса, в письмах, адресованных М. Бабаян проявляется разносторонность его интересов, острота и независимость его мысли, живая и тонкая наблюдательность, в высшей степени чуткое отношение к окружающему его миру. В результате краткого обзора автор заключает, что переписка Комитаса и М. Бабаян имеет важное значение с точки зрения целостного понимания эстетических взглядов и творческих принципов Комитаса. С другой стороны, переписка является достоверным и уникальным фактологическим источником для изучения концертной и творческой деятельности Комитаса и проявляет свет на отдельные фрагменты и события его жизни и деятельности.

Ключевые слова: Комитас, Маргарит Бабаян, переписка.

CORRESPONDENCE OF KOMITAS AND MARGARIT BABAYAN

The correspondence of Komitas and Margarit Babayan is extensive and valuable. Komitas addressed his first letter to M. Babayan from Echmidzin on June 25, 1905. The last one was written from Paris on June 23, 1914. As for the letters written by M. Babayan addressed to Komitas, only six of them have survived. They were written from London on May 15-20, 1910; from Paris on October 18, 1911; from Paris on June 21, 1912; from Paris on July 23, 1912; from Geneva on November 3, 1912; and from Paris on April 10, 1913. The aim of this paper is to outline

the character of Komitas as an artist, a person and a scholar through the letters. Although Komitas is restrained and self-contained in his letters, however, in the letters addressed to M. Babayan, the comprehensiveness of his interests, mental deepness and independence, live and subtle viewership, sensitive attitude towards the surrounding world are displayed. Summarizing the brief review on the correspondence between Komitas and Babayan, the author of this article resumes that it had an important role in better understanding of Komitas's aesthetical views and creative principles. From the other hand, those letters present a reliable and irreplaceable source on Komitas's concert activities and sheds light on definite fragments and events of the life and work of the great musician.

Key words: Komitas, Margarit Babayan, correspondence.



Ալիս Այվազյան (Կիպրոս)
Նիկոսիայի երաժշտության համալսարան

Алис Айвазян (Кипр)
Университет музыки Никосии

Alice Ayvazian (Cyprus)
Music University of Nicosia

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՆՐԱ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս հոդվածը վերաբերում է Կոմիտաս Վարդապետի կյանքին և ստեղծագործությանը: Նպատակն է հասկանալ Կոմիտասի՝ որպես կոմպոզիտորի և երաժշտագետի ներդրումը հայկական երաժշտության մեջ, քանի որ նրա աշխատություններն ի հայտ են եկել ավելի վաղ, քան նշանավոր այլ գիտնականների՝ Զոլտան Կոդայիի և Բելա Բարտոկի գործունեությունը: Խազերի հնագույն նոտագրման համակարգն ուսումնասիրող հայ գիտնականների շարքում առավել ծավալուն հետազոտություն է իրականացրել Կոմիտաս Վարդապետը, որը հայտնի է որպես հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության ոլորտներում հետազոտություններ կատարած առաջատար գործիչ:

Հայկական երաժշտության նրա ուսումնասիրությունները հիմնվում էին ոչ միայն տեղեկատվության երկրորդական աղբյուրների, այլև էջմիածնում՝ հայկական հնագույն տաճարում, և Վենետիկում պահվող բնագիր ձեռագրերի հետազոտությունների վրա: Այս ամենն առավել արժանահավատ է դարձնում կատարված ամբողջ աշխատանքը: Կոմիտասի կյանքի բացահայտ նպատակն էր գրի առնել և այդպիսով պահպանել հայկական ազգային երաժշտական ժառանգությունը, այն հասանելի դարձնել հանրությանը և էթնոերաժշտագիտական ու պատմական ուսումնասիրություններ իրականացնելիս օգտագործել հայ ժողովրդական երաժշտությունը:

Բանալի բառեր՝ Կոմիտաս Վարդապետ, հայ ազգային երաժշտական ինքնություն, խազային նոտագրություն, Համբարձում Լիմոնջյան, տետրախորդ, Հայոց Եղեռն, ժառանգություն:

КОМИТАС ВАРДАПЕТ И ЕГО ВКЛАД В АРМЯНСКУЮ МУЗЫКУ

Данная статья относится к жизни и деятельности Комитаса. Наша цель — осмыслить вклад Комитаса-композитора и музыковеда в армянской музыке, поскольку его исследования появились до того, как развернули свою деятельность другие крупные музыковеды — Золтан Кодай и Бела Барток. Среди армянских музыковедов, изучавших древнюю хазовую систему нотописи, более масштабное исследование совершил именно Комитас, который является одним из крупнейших специалистов в области армянской народной и церковной музыки. Его исследования основывались не только на вторичных источниках информации, но и на изучении подлинных рукописей, которые хранились в Эчмиадзинском храме и в Венеции. Данный факт подчеркивает достоверность работы проделанной Комитасом. Целью жизни Комитаса была фиксация и, таким образом, сохранение армянского национального музыкального наследия, обеспечение его доступности для общественности, а также использование армянской народной музыки в этномузыковедческих и исторических исследованиях.

Ключевые слова: Комитас Вардапет, армянская национальная музыкальная идентичность, Хазовая нотопись, Амбарцум Лимонджян, тетрахорд, Армянский Геноцид, наследие.

KOMITAS VARDAPET AND HIS LEGACY TO ARMENIAN MUSIC

This study concerns the life and work of Komitas Vardapet. The goal is to understand further his contribution to Armenian music both as a composer and a pioneering musicologist whose work appeared before that of other notable scholars such as Zoltan Kodaly and Bela Bartok. Of the (Armenian) scholars who studied the ancient Armenian *Khaz* notation system, the most extensive and pioneering was Komitas Vardapet, an Armenian priest who many regard as the leading figure of Armenian folk and church music research. His study of Armenian music is based not in secondary sources but on original research with musical manuscripts in the collections of Etchmiatsin, an ancient cathedral in Armenia - considered of being one of the oldest in the world, and Venice. These measures thus raise the value of the credibility for his work. His explicit purpose in his life-long research was to write down and thus preserve the national Armenian musical heritage, to make the music available to the public, and to utilize Armenian folk music for ethno-musicological and historical study.

Key words: Komitas Vardapet, Armenian national music identity, *Khaz* notation, Hambardzoum Limondjian, tetrachords, Armenian Genocide, legacy.

	Հասմիկ Հարությունյան (Հայաստան) արվեստագիտության թեկնածու ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն Асмик Арутюнян (Армения) кандидат искусствоведения Ширакский центр арменоведческих исследований НАН РА Hasmik Harutyunyan (Armenia), PhD in Art <i>Shirak Centre for Armenian Studies of NAS RA</i>
---	--

ԿՈՄԻՏԱՍ. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԽՄԲԵՐԳՈՎ

Կոմիտասի ստեղծագործական բազմոլորտ դաշտում կան կարևորագույն թիրախներ, որոնք ընտրվել են դիպլոկորեն և հաղթահարվել են հանճարեղ լուծումների շնորհիվ: Մեր դիտարկման նյութը Կոմիտասի խմբերգերն են՝ ստեղծված հատուկ ուսուցողական նպատակներով էջմիածնում՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի, ինչպես նաև Կոստանդնուպոլսում՝ Նիկողոսյան վարժարանի սաների համար: Շուրջ 100-ի հասնող այս խմբերգերն իրենց գեղարվեստական բարձր արժանիքներով պահանջված են եղել նաև այլ կրթօջախներում (ինչպես օրինակ Ալեքսանդրապոլի, Իգդիրի դպրոցներում): Արժանիքներից մեծագույնը հայ մոնոդիկ երգի բազմաձայն եղանակավորումն ու վերակերպավորումն էր՝ սովորողների տարիքային տարբեր խմբերի կատարողական հնարավորություններին համարժեք, բացառիկ ճշգրիտ մեթոդաբանությամբ: Գեղջկական ու քաղաքային հայտնի գործերի, աշուղական տարածված երգերի ընտրությունն այդ գործերի գեղարվեստական ու գեղագիտական նորովի ընկալումների արմատավորման նպատակն էին հետապնդում: Ու թեև այդ մշակումները կոմիտասյան վաղ շրջանի երկեր են, այդուհանդերձ, սրանցում հստակ երևակվում են նրա կոմպոզիտորական որոնումների ու ապագա նորարարությունների ընձյուղները: Ուսուցումը Կոմիտասի համար մի արդյունաբեր փորձադաշտ էր, որտեղ ուղենշվեցին հայոց ավանդական մեղեդիական մտածողության փոխակերպման շառավիղները:

Բանալի բաներ՝ խմբերգ, ուսուցում, նորարարություն, խմբերգային մեթոդաբանություն:

КОМИТАС: ОБУЧЕНИЕ ХОРОМ

В разносторонней творческой деятельности Комитаса встречаются прицелы, которые были выбраны очень четко и достигнуты гениальными решениями. Материалом данной статьи являются хоровые произведения композитора, созданные специально для обучения в Эчмиадзинской духовной семинарии и школах Константинополя. Важнейшими достоинствами более 100 хоровых произведений являются многоголосная обработка и перевоплощения армянской традиционной монодической песни с тщательно обработанной методологией, в соответствии с исполнительскими возможностями конкретных возрастных групп учащихся.

Выбор крестьянских и городских известных народных произведений, а также ашугских песен преследовали цели укоренения в среде учащихся новейшие художественно-эстетические восприятия этих произведений. И хотя эти обработки принадлежат раннему периоду творчества композитора, но и в них уже очевидны проростки композиторских исканий и будущих новаторств.

Ключевые слова: Комитас, хоровые произведения, обучение, новаторство, методика.

KOMITAS: TEACHING WITH CHORAL SONGS

In Komitas's multi-dimensional creative activity, there are important targets that he chose felicitously and overcame with great solutions. In this article, Komitas's choral songs are under discussion, which were composed for teaching purposes for the younger generation of the *Gevorkian* Seminary in Etchmiatsin and the *Nikoghosyan* College in Constantinople. Due to their expressive and high aesthetic value these choral songs (about 100 pieces) have been of great demand in other education centres (in the schools of Aleksandrapol, Igdir) as well. One of the valued features was with the usage of absolutely correct method, the polyphonic treatment and the transformation of the traditional Armenian monodic melodies, as corresponding to the performance potential of the different age

groups of the students. Komitas chose rural and urban famous folk songs, as well as *ashugh* songs for his arrangements with the purpose of creating new perceptions of these songs. Though these arrangements are among Komitas's early works, his future composing priorities are evident in the latter. Teaching was a fruitful experimental field for Komitas, in which the transformation of Armenian traditional melodic style can be traced.

Key words: Komitas, choral works, teaching, innovation.



Վլոդիմիր Բելամի (Ֆրանսիա)

Փարիզի Վիլ-ժուիֆի հոգեբուժարան

Միշել Քեդ (Ֆրանսիա), բժշկական գիտությունների դոկտոր, պատմական գիտությունների դոկտոր, Փարիզի Մեզոն-Բլանշ բժշկական կենտրոն, Վիլ ժուիֆի հիվանդանոց

Клодин Белами (Франция)

Психиатрическая клиника Виль-Жуиф в Париже

Мишель Кер (Франция)

доктор медицинских наук, доктор исторических наук, медицинский центр Мезон Бланш в Париже, Госпиталь Поль Жиро в Виль-Жуифе



Claudine Bellamy (France)

Paul Guiraud Hospital in Villejuif

Dr. Michel Caire (France)

Maison-Blanche Hospital, Paul Guiraud Hospital in Villejuif

ՀԱՅՐ ԿՈՄԻՏԱՍԻ՝ ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Հեղինակների հետազոտությունն անդրադառնում է Ֆրանսիայում՝ Վիլ Էվրարի հոգեբուժանարանում և Վիլ ժուիֆի՝ հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդների կացարանում Կոմիտասի անցկացրած տարիներին՝ 1919 թ. ապրիլի 6-ից մինչ նրա մահը՝ 1935 թ. հոկտեմբերի 20-ը: Ուսումնասիրությունը հիմնվում է Կոմիտասի բժշկական արխիվային փաստաթղթերի բովանդակության վերլուծության վրա: Արխիվային փաստաթղթերն այսօր լիովին հասանելի են: Ուսումնասիրությունն արտացոլում է Կոմիտասի՝ հոգեբուժարանում անցած երկար ճանապարհը երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում և վեր է հանում նրա հիվանդության, բժշկական խնամակալության, կյանքի պայմանների հետ կապված հարցեր: Հայր Կոմիտասի հոգեկան խնդիրների մասին վկայել են բազմաթիվ բժիշկներ, որոնց անուններն այսօր հայտնի են և ովքեր նրան խնամել են կամ պարբերաբար գննել: Այդ փաստի մասին վկայել են նաև Կոմիտասի մտերիմները: Վերջիններից ոչ ոք կասկածի տակ չի դրել հիվանդանոցում մնալու անհրաժեշտության հիմնավորված լինելը: Ինքը՝ Կոմիտասը ևս կարծես թե դուրս գալու պահանջ չի ներկայացրել: Բուժման հնարավորությունները, որոնք այդ ժամանակաշրջանում սահմանափակ էին, դրական ազդեցություն չունեցան Կոմիտասի հոգեվիճակի վրա, իսկ արգելափակման մեջ երկարատև մնալն էլ ավելի խորացրեց այդ խնդիրները: Հայր Կոմիտասի հետ չէին վարվում այլ հիվանդների նման, ինչին նպաստում էր հայ համայնքի մշտական ներկայությունը, Կոմիտասի ընկերների և երկրպագուների հաճախակի այցերը, որոնք նպաստում էին դրսի աշխարհի հետ կապերի պահպանմանը: Կոմիտասի խնամատար հանձնաժողովի և վարչության միջամտությունը նպաստում է նրա խնամակալության հարցերի լուծմանը և թույլ տալիս բարելավել առօրյա կյանքի պայմանները: Հանձնաժողովը վճարում է բուժման վարձը, որը բավական թանկ էր Վիլ Էվրարում, և հնարավորություն է տալիս խուսափել Հայր Կոմիտասին ծայրամասում գտնվող որևէ այլ բուժական հաստատություն փոխադրելուց: Այնուամենայնիվ, չի հաջողվում նրան տեղափոխել ավելի բարենպաստ կենտրոն՝ Շվեյցարիա, Ավստրիա, Կոստանտնուպոլիս կամ «իր երկիր»: Վիլ Էվրարում, ինչպես այնուհետև Վիլ ժուիֆում, նրան տրվում են բազմաթիվ առավելություններ, այդ թվում՝ առանձնասենյակ, որտեղից տեսարան է բացվում դեպի այգի, ինչպես նաև սքեմ կրելու հնարավորություն, իսկ 1932 թ. Հայր Կոմիտասին ընդունում են այլ բուժական հաստատություն: Այստեղ նա հատուկ բժշկական խնամք էր ստանում սոմատիկ խանգարումների համար, որոնք այդ ժամանակ ենթակա չէին բուժման:

Բանալի բառեր՝ հոգեբուժություն, հիվանդություն, մահ, Կոմիտասի ընկերների կոմիտե:

О ПЕРИОДЕ ПРЕБЫВАНИЯ ОТЦА КОМИТАСА В ПСИХИАТРИЧЕСКОЙ ЛЕЧЕБНИЦЕ

Исследование авторов относится к периоду пребывания отца Комитаса во Франции, в психиатрической клинике в Виль-Эвраре, затем — в общественном приюте для душевнобольных в Виль-Жуифе, в которых он находился с 6-го апреля 1919 г. до дня своей кончины — 20 октября 1935 г. Исследование базируется на анализе содержания медицинских документов Комитаса, которые в настоящее время доступны для общественности. В данной статье прослеживается долгий путь пребывания Комитаса в лечебницах в период между двумя войнами, а также освещаются вопросы, относящиеся к болезни Комитаса, его медицинской опеке и условиям его жизни.

Душевное расстройство Комитаса было засвидетельствовано многими врачами, под опекой или под периодическим наблюдением которых он находился (имена всех врачей ныне известны). Этот факт был отмечен также близкими Комитаса. Никто из них не ставил под сомнение обоснованность удержания Комитаса. Он сам, кажется, не предъявлял требования своего выхода из клиники. Довольно ограниченные методы лечения того времени не оказали эффективного воздействия на состояние Комитаса, а долгий период удержания еще больше усугубил проблему. Тем не менее, к отцу Комитасу относились не так, как к другим пациентам благодаря постоянному присутствию армянской общины, частым визитам его друзей и поклонников, которые способствовали сохранению связи с внешним миром.

Вмешательство Комитета попечителей Комитаса и администрации способствовало организации медицинской опеки Комитаса и улучшению условий его повседневной жизни. Комитет оплачивал расходы на лечение, которые были достаточно высокими в лечебнице в Виль-Эвраре, что позволило избежать его перемещения в другой пригородный приют. Однако, им так и не удалось обеспечить ему более благоприятные условия лечения в Швейцарии, Австрии, Константинополе или на "его родине". Как в Виль-Эвраре, так и в Виль-Жуифе ему были предоставлены особые условия, в том числе отдельная комната, из которой открывался вид на сад, а также возможность ношения сутаны. В 1932 г. Комитаса переводят в другой приют, где он получал особый уход для больных с соматическими расстройствами, которые в то время не поддавались излечению.

Ключевые слова: Комитас, психиатрия, помещение в больницу, болезнь, Комитет попечителей Комитаса, смерть.

ABOUT THE PSYCHIATRIC HOSPITAL STAYS OF FATHER KOMITAS

The authors present a study on the days Father Komitas spent in France, first in the Special Health Facility in Ville-Evrard and afterwards in the public asylum of Villejuif from April 6, 1919 to October 20, 1935, the date of his death. The study is based on the analysis of the content of Father Komitas's medical records, which today are fully accessible to the public with full rights. This research study recounts Father Komitas's long journey within the asylum world during the inter-war period and addresses the issues around his disease, his medical care, and his living conditions. Father Komitas's mental disorders are evidenced by many doctors (the complete list of doctors is now available), who had taken care of him or who had examined him punctually and by his relatives. None of his relatives seem to have questioned the grounds for his detention. Father Komitas himself does not appear to have asked for his release. The treatments, rather limited at that time, had little effect on his disorders and the prolonged detention probably made them even worse. However, Father Komitas wasn't treated like the other mental patients, due to the continued presence of the Armenian community at his side, and the frequent visits of his friends and admirers, which maintained the connection with the outer world. The intervention by the *Father Komitas's Friends Committee* and the administration influenced and galvanized his medical care and improved his daily life. This *Committee* paid the price of his stay, particularly high in Ville-Evrard, and prevented the transfer of Father Komitas to a provincial asylum. However, they did not manage to transfer him to a more appropriate facility in Switzerland, Austria, in Constantinople or "in his country". In Ville-Evrard, as well as in Villejuif, Father Komitas received various benefits such as a single room overlooking a garden and the permission to wear his cassock. In 1932 he was admitted to a new house, where he received special care necessitated by somatic disorders that the treatments of that time could not cure.

Key words: Komitas, psychiatry, internment, disease, Komitas's Friends Committee, death.

Գլուխ Բ. «Կոմիտասը և երաժշտական ֆոլկլորը» Chapter II: Komitas and Folk Music



Ալինա Փափևանյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր
ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Алина Пахлеванян (Армения)
кандидат искусствоведения, профессор
Заслуженный деятель искусств РА
Ереванская государственная консерватория имени Комитаса

Prof. Alina Pahlevanyan (Armenia)
PhD in Art, Honored Worker of Arts of RA
Komitas State Conservatory

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոմիտասի հետազոտությունը երաժշտական ֆոլկլորագիտության մեջ կարևոր է ոչ միայն հայկական, այլև այլ ազգերի ֆոլկլորային երաժշտության ուսումնասիրության համար: Կոմիտասը համարվում է հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր: Հավաքելով հազարավոր ժողովրդական երգեր և մեղեդիներ, նա դրանք ուսումնասիրել է և դասակարգել ըստ ժանրերի: Հաջորդ քայլը եղել է հայ երաժշտության կառուցվածքին համապատասխան բազմաձայնության որոնումը: Սույն հոդվածը փորձ է բացատրելու, թե ինչու էր Կոմիտասը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը, ինչպես ընդունված է համարել հայ երաժշտագիտության մեջ: Քննվում են Կոմիտասի առաջադրած հետևյալ խնդիրները.

- ✓ Ո՞րն է հայ ավանդական երաժշտության բանավոր եությունը: Ո՞րն է իմպրովիզացիայի դերը բանավոր ավանդույթի ներսում:
 - ✓ Ի՞նչ դեր ունի նոտագրությունը երաժշտության մեջ: Ի՞նչ կորուստներ են լինում նոտագրության դեպքում: Ինչպե՞ս են փոխհարաբերվում գրավոր և բանավոր ավանդույթները:
 - ✓ Յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ երաժշտական բարբառների բացահայտումը:
 - ✓ Ժողովրդական երաժշտական ստեղծագործության մեջ հեղինակի գոյության կամ բացակայության խնդիրը:
 - ✓ Երգերի կենսունակությունը, նրանց կյանքի տևողությունը: Ո՞ր երգերն են ապրում ավելի երկար, և որո՞նք կարճ կյանք ունեն:
 - ✓ Երգերին հատուկ երաժշտական ֆրագմենտի բնորոշումը և բանաձևային արտահայտությունների դուրս բերումը: Ի՞նչ չափով կարող է իմպրովիզացիան գոյություն ունենալ բանաձևային մտածողության մեջ:
 - ✓ Բանահավաքչության մեջ երգի ստացիոնար գրառման մոտեցումը:
 - ✓ Ռիթմը հայ ժողովրդական երգի մեջ:
- Բանալի բառեր՝** հայ երաժշտական ֆոլկլորագիտություն, ռիթմ, մետր, բանահավաքչական աշխատանք, գրառում:

КОМИТАС И ВОПРОСЫ АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ ФОЛЬКЛОРИСТИКИ

Исследование Комитаса в области музыкальной фольклористики представляет важность с точки зрения изучения музыкального фольклора не только армян, но и других народов. Комитас считается основоположником армянской национальной композиторской школы. Собирая многочисленные народные песни и мелодии, он изучил их и классифицировал по жанрам. Следующим шагом стал поиск многоголосия, соответствующего структуре армянской музыки. В данной статье мы попытались разъяснить – почему же

Комитас является основоположником армянской национальной композиторской школы, как принято считать в армянском музыковедении. В статье освещаются следующие проблемы, выдвинутые Комитасом:

- ✓ Какова устная сущность армянской традиционной музыки? Какова роль импровизации в рамках устного творчества?
- ✓ Какую роль играет нотация в музыке? Какие утраты происходят в процессе нотирования? Каким образом сочетаются устная и письменная традиции?
- ✓ Выявление характерных музыкальных диалектов каждого региона.
- ✓ Присутствие или отсутствие автора в народном музыкальном песнетворчестве.
- ✓ Жизнеспособность песен. Какие песни живут дольше, у каких – более краткая жизнь.
- ✓ Характеристика типичных музыкальных фраз и выявление мелодических формул. В какой степени импровизация может присутствовать в формульном мышлении?
- ✓ Подход к стационарной записи песни в собирательской деятельности.
- ✓ Ритм в армянской народной песне.

Ключевые слова: армянская музыкальная фольклористика, ритм, метр, собирательская деятельность, нотирование.

KOMITAS AND THE PROBLEMS OF ARMENIAN MUSIC FOLKLORISTICS

